ԱՐԴ/1760/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

28 սեպտեմբերի 2022 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Լուսինե Ռաֆիկի Հովհաննիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը 2022 թվականի մարտի 16-ին հայցադիմում է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Լուսինե Հովհաննիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Նույն դատարանի՝ 2022 թվականի մարտի 24-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և կիրառվել պարզեցված վարույթ:

2. Նույն դատարանի՝ 2022 թվականի հունիսի 13-ի որոշմամբ քաղաքացիական գործն ուղարկվել է ըստ տարածքային ընդդատության՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Թիվ ԱՐԴ/1760/02/22 քաղաքացիական գործը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 12-ին:

Նույն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու համար այն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 26-ին:

<u>Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. 2022 թվականի հունիսի 13-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հետևյալ հիմնավորմամբ. *«Պատասխանող Լուսինե Ռաֆիկի Հովհաննիսյանը պատշաճ կերպով ծանուցվել է դատական նիստերի վայրի և ժամանակի մասին, սակայն վերջինիս ուղարկված դատավարական փաստաթղթերը հետ են վերադարձվել դատարան: Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջները՝ հարցում է կատարվել պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին, որի 13.06.2022 թվականի թիվ 01760 գրությամբ դատարանին հայտնվել է, որ պատասխանողը հաշվառված չէ և չի բնակվում Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի Օդանավակայանի 6 փողոցի թիվ 32 հասցեում: Պատասխանող Լուսինե Ռաֆիկի*

Հովհաննիսյանը համաձայն ՀՀ ընտրողների ռեգիստրի հաշվառված է Արարատի մարզի, Մասիս համայնքի Արգավանդի Օդանավակայանի 6 փողոցի թիվ 32 հասցեում»[1]*:*

6. 2022 թվականի սեպտեմբերի 15-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթների, քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու համար գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ. *«(…) [Ե]թե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը դատարանը կարող է հանձնել այլ դատարանի քննությանը, եթե մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը պատասխանողն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ, իսկ այն դեպքում, երբ գործը քննվում է պարզեցված վարույթի կարգով, ապա այդ գործը դատարանը կարող է հանձնել այլ դատարանի քննությանն այն դեպքում, երբ պատասխանողը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում ներկայացնում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ առարկություն:*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հարկ եմ համարում նշել, որ սույն գործում բացակայում է պատասխանող Լուսինե Հովհաննիսյանի կողմից գործը Դատարանում քննելու վերաբերյալ առարկություն, հետևաբար, քանի դեռ Դատարանը չի պարզել պատասխանողի կողմից նշված հարցի վերաբերյալ առարկություն ունենալու հանգամանքը (ընդ որում վերջինիս հաշվառման հասցեով դատական ծանուցագիր չի ուղարկվել), (…) գործը պետք է շարունակվի քննվել Դատարանում»[2]*:*

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, էջ 30:
[2] Տե՛ս քաղաքացիական գործը, էջեր 38-40:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/1760/02/22 քաղաքացիական գործն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»:*

Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի»:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ»:*

Նույն օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատարանները պարզեցված վարույթն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են 41-րդ գլխի դրույթներով»:*

Նույն օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործին մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող*

են ներկայացվել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում»:

9. Նախորդ կետում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Ընդ որում, հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք ներկայացված հայցադիմումում պահպանվել են օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Այդուհանդերձ, եթե դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ գործի ըստ էության քննության ընթացքում է հայտնաբերում ընդդատության կանոնների խախտումը, ապա դատարանն իրավասու է այդ գործը հանձնել ըստ ընդդատության՝ այլ դատարանի, եթե պատասխանողը ներկայացրել է առարկություն՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ: Ընդ որում, պատասխանողն այդ առարկությունը կարող է ներկայացնել մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

10. Քաղաքացիական գործերի տարածքային ընդդատության վերաբերյալ վերը նշված կանոնները կիրառելի են ոչ միայն ընդհանուր կարգով քննվող գործերի, այլ նաև պարզեցված վարույթների նկատմամբ՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ գլխի՝ պարզեցված վարույթին վերաբերող նորմերով: Մասնավորապես, գործը պարզեցված վարույթի կարգով քննելիս ընդդատության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում, գործն ըստ ընդդատության այլ դատարան հանձնելու համար անհրաժեշտ է, որ պատասխանողը ներկայացրած լինի առարկություն՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ պարզեցված վարույթ կիրառելու մասին դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

11. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, պարզ է դառնում, որ գործը պարզեցված վարույթի կարգով քննելիս ընդդատության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում, գործն ըստ ընդդատության այլ դատարան կարող է հանձնվել, եթե առկա է պատասխանողի կողմից սահմանված ժամկետում ներկայացված առարկություն՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը 2022 թվականի մարտի 16-ին հայցադիմում է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Լուսինե Հովհաննիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին[3],

- 2022 թվականի մարտի 24-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և պարզեցված վարույթ կիրառելու մասին որոշում[4],

- 2022 թվականի հունիսի 13-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել քաղաքացիական գործն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին[5],

- 2022 թվականի սեպտեմբերի 15-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու համար գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին[6]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ տվյալ դեպքում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի հայցադիմումի հիման վրա Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործը

---

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

պարզեցված վարույթով քննելիս ընդդատության կանոնների խախտում հայտնաբերելուց հետո, պատասխանող Լուսինե Հովհաննիսյանից չի ստացվել առարկություն՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Նման պայմաններում, գտնում եմ, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/1760/02/22 քաղաքացիական գործն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԱՐԴ/1760/02/22 քաղաքացիական գործն ըստ հայցի «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Լուսինե Հովհաննիսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ